ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Հարութ Թերջյանը, Արթուր Հովհաննիսյանը, Գոռ Հունանյանը, Եպրաքսի Մալխասյանը, Մյասնիկ Պողոսյան ը, Սուրեն Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորաին Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.01.2025 ԹՎԱԿԱՆԻ N 06-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 1.3 ՀԱՎԵԼՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Կառավարության 10.07.2025 թվականի N 921-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 06-Ն որոշմամբ հաստատված N 1. 3 հավելվածի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 89-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ

բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող վարչական շենքի դահլիճի վերանորոգման համար գումար հատկացնելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող վարչական շենքի դահլիճի վերանորոգման համար հատկացնել 975.000 / ինը հարյուր յոթանասունհինգ հազար / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ /ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.06.2023 ԹՎԱԿԱՆԻ N 64-Ն ՈՒ 19.12.2023 ԹՎԱԿԱՆԻ N 120-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մաս պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտի համայնքում հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքում հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.
- Նորաին Հակոբյան - համայնքի ղեկավար,
- Գագիկ Մուքոյան - աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ,
- Մնացական Պողոսյան - աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ,
- Սմբատ Պետրոսյան - աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ ,
- Պարզանուշ Մխիթարյան - աշխատակազմի առաջատար մասնագետ / իրավաբան /
- Արծրուն Ավետիսյան - ավագանու անդամ
- Հրաչիկ Միերյան - ավագանու անդամ

2. Մրցութային հանձնաժողովի կազմից աճուրդավար նշանակել համայնքի ղեկավարին, իսկ արձանագրող՝ աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետին :

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 22.06.2023 թվականի N 64-Ն և 19.12.2023 թվականի N 120-Ն որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածքները մրցութային կարգով տրամադրել վարձակալության, սահմանել դրանց մեկնարկային գները և հավելաճի քայլի չափերը՝
- Գեղարոտ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության , 02-032-0101-0024 կադաստրային ծածկագրով 0,99424 հա հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել 7.000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 1000 ՀՀ դրամ,
- Գեղարոտ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության , 02-032-0106-0059 կադաստրային ծածկագրով 0,90846 հա հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել 6.000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 1000 ՀՀ դրամ,
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 25.08.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ՍՆԴ/1073/04/19 ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՍՆԱՆԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ 09.02.2024 ԹՎԱԿԱՆԻ ՎՃՌՈՎ ԱՎԱՐՏՎԱԾ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՌՆԻԿ ՎԵԼԻԽԱՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի , 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 90-րդ հոդվածի, ՀՀ « Հարկային օրենսգրքի » 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի , 236-րդ հոդվածի 3-րդ մասի, 324-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Լեռնիկ Վելիխանի Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի ՍՆԴ/1073/04/19 սնանկության գործով 25.08.2020 թվականի և 09.02.2024 թվականի վճիռները, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Դադարեցնել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովի համայնքի Լեռնապար բնակավայրի բնակիչ Լեռնիկ Վելիխանի Ալեքսանյանի անվամբ հաշվառված և սնանկության հետևանքով 22.01.2024 թվականին հրապարակային սակարկություններով օտարված 02-049-0109-0016 կադաստրային ծածկագրով 1,826 հա, 02-049-0117-0003 կադաստրային ծածկագրով 1,246 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերի և 02-049-0023-0022 կադաստրային ծածկագրով 0,266 հա բնակելի կառուցապատման հողամասի հարկային պարտավորությունները և ազատել մինչև սնանկությունը հաշվարկված և առկա պարտավորություններից՝ 351.874 / երեք հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր յոթանասունչորս / ՀՀ դրամ չափով :

2. Վերը նշված գումարի չափով համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում կատարել նվազեցում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ՝ ՀՐԱՅՐ ՋԱՐՋԱՆԴԻ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի բնակիչ Հրայր Զարզանդի Աթանեսյանի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Քննարկել և տալ համաձայնություն ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրում սեփական միջոցներով հանդիսությունների սրահ կառուցելու և այդ նպատակով անհրաժեշտ հողատարածք տրամադրելու վերաբերյալ Երևան քաղաքի բնակիչ՝ Հրայր Զարզանդի Աթանեսյանի առաջարկությունը :
2. Հանդիսությունների սրահի կառուցման համար հատկացնել Ծիլքար բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 02-056-0023-0002 կադաստրային ծածկագրով 0,09731 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը :
3. Համայնքի ղեկավարին՝
- պատվիրել չափագրում և հանդիսությունների սրահի կառուցման նախագիծ :
4. Թույլատրել համայնքի ղեկավարին հանդիսությունների սրահի կառուցման համար կատարել ներդրում մինչև 1.000.000 / մեկ միլիոն / ՀՀ դրամի չափով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՕԹԵՎԱՆ ԲՆԱԿԻՉ ԱՆՆԱ ՀԱՄԼԵՏԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ ՎԱԳՈՆ-ՏՆԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրի անօթևան բնակիչ՝ Աննա Համլետի Ալթունյանի կողմից կացարան տրամադրելու խնդրով ՀՀ վարչապետին հասցեագրված դիմումը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանից 04.08.2025 թվականին ստացված N 01/3.1/05129-2025 գրությունը, ինչպես նաև Աննա Ալթունյանին վագոն-տնակ ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրի անօթևան բնակիչ՝ Աննա Համլետի Ալթունյանին վագոն-տնակ ձեռք բերելու նպատակով հատկացնել 400.000 / չորս հարյուր հազար / ՀՀ դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Ծաղկահովիտ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 16-ը, ժամը 14:00-ն:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը հետևյալ բովանդակությամբ՝

Եկամտային մասում՝

1) **09** բաժին **01** խմբի **00** դասի (Գյուղատնտեսական նշանակության հողի հարկ մինչև 31.12.2020 թվականի դրությամբ) եկամուտներից նվազեցնել **6 000 000** (վեց միլիոն) ՀՀ դրամ եկամուտ,

Ծախսային մասում՝

2) **10** բաժնի **07** խմբի **01** դասի (Սոցիալական հատուկ արտոնություններ) գործառնական դասակարգման **4729** (Այլ նպաստ բյուջեից) տնտեսագիտական հոդվածի պլանից նվազեցնել **6 000 000** (վեց միլիոն) ՀՀ դրամ ծախս:

3) Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 82-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ ԳԵՂԱԴԻՐ ՀՆԱԲԵՐԴ ԳԵՂԱՁՈՐ ԵՎ ԲԵՐՔԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳԱԶԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր և Բերքառատ բնակավայրերի գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում արտացոլված և փաստացի կատարված աշխատանքների համադրման արդյունքների փաստի մասին Ծաղկահովիտի համայնքապետարանի և «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ միջև 2025 թվականի հունիսի 3-ին կնքված N 5 - համաձայնագիրը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Համաձայնություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր և Բերքառատ բնակավայրերում գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում արտացոլված և փաստացի կատարված աշխատանքների համադրման արդյունքներին և թույլատրել «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին վճարել՝ **2458329 /երկու միլիոն չորս հարյուր հիսունութ հազար երեք հարյուր քսաներեք**/ ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 62-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2025 թվականի սեպտեմբերի 18-ի հերթական նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում հողամասերը վարձակալության /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու և ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 22.06.2023 թվականի N 64-Ն ու 19.12.2023 թվականի N 120-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 06-Ն որոշմամբ հաստատված N 1.3 հավելվածի 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր և Բերքառատ բնակավայրերում գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների կատարման արդյունքում ի

հայտ եկած համադրման արդյունքներին համաձայնություն տալու և վճարումը թույլատրելու մասին
5. Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի 25.08.2020 թվականի թիվ ՍՆԴ/1073/04/19 սնանկության գործով սնանկ ճանաչված և 09.02.2024 թվականի վճռով ավարտված սնանկության գործով քաղաքացի Լեոնիկ Վելիխանի Ալեքսանյանի հարկային պարտավորությունները դադարեցնելու ու հարկային պարտավորություններից ազատելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ բնակավայրում գտնվող, համայնքային ենթակայության վարչական շենքի դահլիճի վերանորոգման համար գումար հատկացնելու մասին
9. Երևան քաղաքի բնակիչ՝ Հրայր Զարզանդի Աթանեսյանի առաջարկը քննարկելու և համաձայնություն տալու մասին
10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրում գտնվող 02-053-0009-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքից 0,5 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին
11. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրի անօթևան բնակիչ՝ Աննա Համլետի Ալթունյանին վագոն-տնակ ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին
12.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 02-053-0009-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ 0,5 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի, « Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-053-0009-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքից 0,5 հա հողատարածքի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, այն դարձնել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86-Ն)*

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄՀԵՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արայիկ Ավետիսյանը_____